



Doi: 10.56737/2953-7843-2025.11-72

ՄԱՍԻՍ ԱՐԱՐԱՏԵԱՆ

Բանասիրական գիտ. թեկնածու

Գերակայ ռազմավարական հետազոտությունների կենտրոն

ԱՆԻ ԽՈՒԴԱՎԵՐԳԵԱՆ

Բանասիրական գիտ. թեկնածու, ՀԱԱՀ

### ԲԱԲԵԼԱԿԱՆ ՅՈՒԲԻ ՔԵՐԹՈՒԼՈՐ<sup>1</sup>

Ի. դարի կէսերին Ուիլֆրէդ Ջօրջ Լամբէրտը, վերծանելով եւ ընթերցելով, մարդկութեանը վերադարձրեց մի ստեղծագործութիւն, որում խտացած էին Ք. ա. Բ. հազարամեակի մարդու յոյզերն ու ապրումները: Ու թէեւ կաէ սալիկի շատ հատուածներ փշրուել, վերացել էին, բայց պահպանուած հատուածները լիովին բաւական էին ստեղծագործութեան արժէքը գիտակցելու համար: Գրառման կերպից, կառուցուածից եւ յատկապէս տողատման հանգամանքից երեւում էր, որ ստեղծագործութիւնն արձակ չէ, իսկ պարունակած նիւթի հիման վրայ՝ այն է՝ արդարի անտեղի տառապանք եւ աստուածային արդարադատութեան խնդրի արծարծում, արագ որոշուեց իր տեղը համաշխարհային գրաւոր մշակոյթի համակարգում՝ ըստ այդմ տրամադրելով նաեւ պայմանական վերտառութիւն՝ Բաբելական «Յոբ»-ի գիրք: Նորայայտ գործը, որ յաճախ կոչւում է նաեւ «Բաբելական աստուածարդարացում»<sup>2</sup> երկխօսական-իմաստասիրական բանաստեղծութիւն է, ուր արդար մարդը՝ իր անտեղի տառապանքի փորձառութեամբ, կասկածի է ենթարկում աստուածային արդարութիւնը, բայց գրեթէ նոյն պահին հիմնաւոր հերքում է հետեւում, որ կարող է դիտուել եւ որպէս հեղինակի երկխօսութիւն ինքնիր հետ եւ մի երկրորդ անձի զրուցակցում: Քերթուածը խոր ու սթափ արտայայտութեամբ բա-

<sup>1</sup>\* Ստացուել է՝ 9.09.2025, գրախօսուել է՝ 9.10.2025: էլ. հասցէ՝ MasisAraratean@gmail.com, a\_khudaverdyan@mail.ru:

<sup>2</sup> Միջազգ. Theodicy (յուն. Θεοδικία):

ցում է մարդկային ճակատագրի անկայունությունը, աստուածների կամքի անքննելիությունը եւ այն ողբերգական լարումը, որ ծագում է բարեպաշտութեան ու կեանքի իրականութեան միջեւ:

Շուրջ 3300–3400 տարեկան յուշարձանը մարդկային էությունը խորապէս ճանաչելու վկայութիւններ ունի, եւ կարելի է վստահ լինել, որ ամենեւին չափազանցություն չէ հեղինակի խոստովանությունը՝ (Իմ աչքով տեսայ ամենը կեանքում), երբ նկարագրում է առատությունից շլացող եւ շփացող մարդ արարածին՝ ստեղծելով մի պատկեր, որ իր մեծ ընդհանրացման շնորհիւ նոյն զօրութեամբ է հնչում նաեւ այսօր՝ քննադատելով ուղղակի եւ փոխաբերական իմաստներով ուտելը միակ նպատակ ունեցողներին (տէն գլ. Բ. 19) կամ դրանից «կուրացողներին»:

Երբ որ սոված եմ, խոնարհ եմ [մարդիկ], համեստ եմ ու հեզ,

երբ յափրացած եմ, Աստծուն կկանչեմ մրցման ասպարէզ (գլ. Բ. 44–45):

Այս տեսանկիւնից քերթուածը մարդկային ապրումների, կեանքի ու մահուան, իշխանութեան ու դիրքի անցողիկութեան մասին մտորումների ու խոհերի կարեւոր շտեմարան է:

Նշեցինք, որ երկու ստեղծագործություններն անդրադառնում են մարդկային տառապանքի եւ աստուածային արդարադատութեան խնդրին: Բայց նմանություններով հանդերձ, դրանց աստուածաբանական հիմքերն էականօրէն տարբեր են: Իբրեւ հիմնական կարելի է յիշել տառապանքի պատճառն ու գերագոյն էութեան բնոյթը: Բաբելական արդարի գրքում աստուածները (յատկապէս Մարդուկը) ներկայացուած են իբրեւ անզուշակելի վարքի տէր: Տառապանքը յաճախ դիտւում է որպէս աստուածների՝ մարդուն անհասանելի զայրոյթի արդիւնք կամ դեւերի ներգործություն, որոնց դէմ մարդն անզօր է: Աստուածների կամքը մարդու համար բացարձակապէս անընկալելի է, իսկ Մարդուկի խոհերն անհաս են անգամ աստուածների համար: Յոբի գրքում, ինչպէս գիտենք, տառապանքը չի բխում Աստծու քմահաճոյքից, այլ ներկայացուած է որպէս փորձություն: Այստեղ առանցքն Աստծու իշխանությունն է, եւ այն գաղափարը, ըստ որի ամենեւին պարտադիր չէ, որ տառապանքը լինի մեղքի պատիժ, այլ կարող է լինել հաւատքի փորձաքար: Մեղքի եւ մաքրութեան ընկալման տեսանկիւնից Բաբելական քերթուածում հերոսը պնդում է, որ ինքը կատարել է բոլոր ծիսա-

կան պարտաւորութիւնները, բայց միեւնոյնն է՝ պատժուել է: Սա կարող է հիմք լինել յուսահատութեան, քանի որ չկայ յստակ կապ բարոյական վարքի եւ աստուածային օրհնութեան միջեւ: Մարդը կարող է մեղաւոր լինել՝ առանց դա իմանալու (անգիտակից մեղք): Յորը նոյնպէս պնդում է, որ ինքն անմեղ է, սակայն նա վիճարկում է բարոյական արդարութեան հարցը: Ի տարբերութիւն բաբելական բնագրի, Յորը պահանջում է երկխօսութիւն Աստու հետ եւ պատասխան է ստանում, որը վերաբերում է տիեզերական կարգին<sup>3</sup>: Բաբելական քերթուածում տառապանքն աւարտում է, երբ յարդիւնս մոգական ծէսերի Մարդուկը որոշում է գթալ տառապեալին: Շեշտը դրուած է աստուին սպասարկող քրմերի եւ այսահալածների դերի վրայ, ովքեր աստու հետ յարաբերութիւնները վերականգնելու միջնորդ են, իսկ Յորի գրքում յանգուցալուծումն Աստու անմիջական յայտնութեամբ է լինում: Աստուած չի բացատրում Յորին նրա տառապանքի անմիջական պատճառը, այլ ցոյց է տալիս իր արարչագործութեան փառքը: Յորի հանգստութիւնը բխում է ոչ թ՝ մարմնաւոր բժշկումից, այլ Աստու հետ անձնական հանդիպումից եւ խոնարհումից:

Առանձնակի կարեւոր է քերթուածի կրօնական շերտը, որ ուշագրաւ տեղեկութիւններ է տրամադրում հինմիջագետքեան մարդու հաւատալիքների մասին: Ըստ այս ստեղծագործութեան՝ բաբելական գլխաւոր աստուած Մարդուկը (շումերերէն Արեգակի հորթ. իմա՛ Արեւի զաւակ) ներկայանում է որպէս գերագոյն իշխանութիւն, որի մէջ միաւորուած են հակադիր գործառոյթներ՝ եւ խնամող ու բուժող, եւ պատժող ու գթառատ: Նրա կամքով են գործում ինչպէս արական, այնպէս եւ իգական սեռի աստուածները, նաեւ ոգիներն ու դեւերը, որոնք միջագետքեան աւանդոյ-

<sup>3</sup> Հմմտ. ԺԳ. 3 «Բայց սակայն ես ընդ Տեանն խօսեցայց. յանդիմանեցայց առաջի նորա, եթէ կամեսցի», ԻԳ. 3–7. «Իսկ ո՞վ ծանուցէ եթէ գտից զՆա, եւ հասից նմա ի սպառ: Եւ ասացից առաջի նորա զիրաւունս. լցից զբերան իմ յանդիմանութեամբ: 5 Ծանեայց զողոքանս զոր ընդ իս խօսիցի. խելամո՞տ եղէց այնմ զոր ինձն պատմիցէ: 6 Եւ բազում զօրութեամբ եկեսցէ ի վերայ իմ. եթէ զպատուհաս Իւր ի գործ ո՞չ արկանիցէ: 2ի ճշմարտութիւն եւ յանդիմանութիւն ի նմանէ է, հանցէ ի սպառ զիրաւունս իմ: 8 Եթէ յառաջագոյն երթայցէ՝ ոչ եւս իցեմ, եւ զվերջինսն զի՛ գիտիցեմ» եւ վերջում Աստուած ոչ թէ պարզապէս տառապանքի պատճառն է խօսքի նիւթ դարձնում, այլ բացում է արարչագործութեան տիեզերական փառքն ու կարգը՝ հարցնելով. «4Ո՛ւր էիր մինչ ես հիմունս 5 արկանէի երկրի. պատմեա՛ ինձ եթէ խելամո՞տ ես հանճարոյ» (ԱԸ. 4): Մարդկային իրաւունքի պահանջը տեղի է տալիս աստուածային անհուն իմաստութեան առջեւ, եւ Յորն ստանում է իր փնտրած պատասխանը ոչ թէ տրամաբանական փաստարկով, այլ Աստու ներկայութեան անմիջական յայտնութեամբ:

Թում հանդէս են գալիս տարբեր սեռային կերպաւորումներով: Քերթուածը ցոյց է տալիս, որ Մարդուկը կարող է առ ոչինչ համարել մահուան վճիռը եւ ի կեանք վերադարձնել մահուան շեմին գտնուող մարդուն: Աւելի ուշ շրջանում այս աստուածութիւնը Բէլ Մարդուկ կապակցութեամբ է սկսում յիշուել, ուր առաջին բաղադրիչը նշանակում է Տէր: Դա սկզբնապէս էնլիլի կոչումն է եղել, սակայն Բաբելոնի վերելքի հետ փոխանցուել է Մարդուկին, որ աստիճանաբար ժառանգել է նաեւ էնլիլի գործառոյթներն ու դարձել բաբելական դիցարանի գլխաւոր աստուածը:

Դիտարկուող քերթուածի կապակցութեամբ տեղին են աւագերէց Ալեքսանդր Մէնի խօսքերը ասուած Յոբի գիրքը ներկայացնելիս. «Անմեղ տառապեալի մասին նիւթն առաջին անգամ երեւան է գալիս Միջագետքի իմաստունների գրուածքներում: Յայտնի են պոեմների շումերական եւ բաբելական տարբերակները: Դրանցում մարդը, որ ծանր դժբախտութիւնների է հանդիպել, մտորում է Աստուածութեան Կամքի մասին եւ խոնարհուում նրա առաջ: Այդ պօէմների աւարտը բարեյաջող է, ինչպէս Յոբի պարագային: Երկինքը պարգեւատրում է տառապեալներին՝ իրենց հաւատի եւ համբերատարութեան համար: Այս պօէմները կարող էին ծանօթ լինել Աստուածաշունչ գրքի հեղինակներին, եւ օգտագործուել են իբրեւ հենք»<sup>4</sup>:

Ընդունուած է, որ Յոբի գիրքը կարելի է հասկանալ ոչ թէ որպէս Բաբելականի շարունակութիւն կամ մշակում, այլ որպէս նոյն հարցի անկախ եւ աստուածաբանօրէն նորարար լուծում, որը գիտակցաբար հեռանում է հինմերձաւորարեւելեան «անգիտակից մեղքի» եւ աստուածային քմահաճութեան բացատրական կերպից: Եթէ նմանութիւններ կան, ապա դրանք միջավայրային են, ոչ փոխառեալ, եւ չեն արդարացնում ուղղակի ազդեցութեան մասին խօսքը<sup>5</sup>:

Ստորեւ ներկայացնում ենք Բաբելական քերթուածը, որ կատարել ենք անգլերէն տողացիից՝ ըստ Լամբերտի յիշեալ աշխատութեան, որ աքքադերէն բնագրի քննագիտական ընթերցումն է:

<sup>4</sup> Ա. Մէն, *Հին Կտակարանի ներածութիւն*, Ս. էջմիածին, 2020, էջ 476–477:

<sup>5</sup> *Տէս* W. G. LAMBERT, *Babylonian Wisdom Literature* (Oxford: Clarendon Press, 1960), յատկապէս 21–22, 145–170; JAMES L. CRENSHAW, *Old Testament Wisdom: An Introduction*, 3<sup>rd</sup> ed. (Louisville: Westminster John Knox Press, 2010), 88–92; JOHN H. WALTON, *Ancient Near Eastern Thought and the Old Testament* (Grand Rapids: Baker Academic, 2006), 281–289; Tremper Longman III, *Job* (Grand Rapids: Baker Academic, 2012), Introduction, 56–59; CAROL A. NEWSOM, *The Book of Job: A Contest of Moral Imaginations* (Oxford: Oxford University Press, 2003), 23–27:

Ներկայացրած տողացի թարգմանութիւնը հիմնուած է աքքադերէն բնագրի քննագիտական ընթերցման վրայ՝ ըստ W. G. LAMBERT, *Babylonian Wisdom Literature*, Oxford: Clarendon Press, 1960 (յատկապէս՝ *Ludlul bēl nēmeqi* բաժինը):

Ճշգրտումների համար կիրառուել է Զիկագոյի համալսարանի Արևելեան հաստատութեան բառարանը<sup>6</sup>:

---

<sup>6</sup> The Assyrian Dictionary of the Oriental Institute of the University of Chicago (CAD):

## Աստուղի տառապող արդարի Բարելական քերթուածը

ԳԼՈՒԽ Ա.

ՓԱՌԱԲԱՆԵԱԼ Է՝ ՏԷՐՆ ԻՄԱՍՏՈՒԹԵԱՆ՝

- 1 Փառաբանեալ է Տէրն իմաստութեան,  
[Գովաբանում եմ] խնամիչ Աստծուն՝
- 2 Գիշերն ալեկոծ, անհանգիստ, ծփուն,  
ցերեկով՝ խաղաղ, հանդարտ վիճակում:
- 3 Մարդուկն [է մեր վեհ] Տէրն իմաստութեան,  
Աստուած [ողորմած ու] բարեխնամ,
- 4 Գիշերն ալեկոծ, ցերեկն անսասան:
- 5 [Նա է], որ ցասման-բարկութեան պահին  
փոթորկի պէս է՝ ջնջող, մոլեգին,
- 6 Որի հովիկն է փաղցր շունչն այգի,
- 7 Իսկ Իր զայրոյթը [մահաբոյր վկան] շարդող հեղեղի:
- 8 Մինչդեռ ֆնֆշական զգացմունքի պահին՝  
ողորմած, մեղմող բոլոր ցաւերի:
- 9 Իր բազկի փաշից անշուշտ կկփի,  
երէ այն մի օր տիեզերքին իջնի,
- 10 Բայց եւ նուրբ է շատ ձեռքն այն [ֆնֆշական],  
երբ որ մեռնողին հասնի փրկութեան:
- 11 Իր բազկի փաշը տիեզերք կննչի,
- 12 Բայց եւ ֆնֆշութեամբ մեռեալ կփրկի:
- 13 Երբ նա զայրացած բարկութեամբ լցուի՝  
ամեն մի ֆայլի շիրիմ պիտ բացուի,
- 14 Իսկ երբ հայեացքը ուղղի ընկածին  
յարութին կգայ վաղուց մեռածին:
- 15 Երբ մոայլում է, փախչում են իսկոյն  
բիւր ոգիները՝ պահապան մարդուն,
- 16 Իսկ երբ հայեացքը մի մարդու ուղղի  
նրան միայնակ թողած աստուածը սատար կկանգնի:
- 17 Խիստ է պատիժն Իր, դաժան, շեշտակի,
- 18 Գուցէ ձգձգում, ուշացում լինի,  
սակայն մօր նման [օգնութեան] կգայ նեղութեան պահի:

19 Մերթ մոլեգին է՝  
 առաջ է նետում վայրի ցլի պէս,  
 20 Մերթ հորթ ունեցող կովի է նման,  
 որ յետ է նայում՝ զգուշաւոր ու հեզ:  
 21 Խարազանն իր փուշ՝ իջնում է ուժգին  
 անխնայ խոցում [զլուխ] եւ մարմին,  
 22 մինչդեռ սփոփիչ են կապանքն իր վերին  
 ամոճող անգամ դատապարտուածին:  
 23 Նա է միշտ վերին վնիռ արձակում՝  
 24 մէկին՝ դատաստան, մէկին՝ թողութիւն:  
 25 Նա է դժոխքի դողով հարուածում,  
 26 բայց եւ սրբազան հմայքով բարի  
 ցուրտն է փարատում ու դողը վանում:  
 27 Նա է սաստկացնում զարկը Ադադի, հարուածն էոայի<sup>7</sup>,  
 28 Նա է հաշտեցնում ընդհարման պահին՝  
 զայրացած աստծուն եւ աստուածուհուն:  
 29 Իմաստուն է նա, Տէրն ամենակալ,  
 որ միշտ կարող է պարզորոշ կարգալ  
 թափուն մտերը մեր աստուածների,  
 30 մինչդեռ նրանցից ոչ ոք չի կարող  
 ըմբռնել ընթացքն Իր անխմանալի:  
 31 Խորագէտ ու մեծ Մարդուկն է կարդում  
 մեր աստուածների մտերը թափուն,  
 32 Իսկ վերջիններս՝ ոչ մի կռահում  
 ինչ է թափցրել մարդուկն իր մտքում:  
 33 Որքան որ ծանր է ձեռքը Մարդուկի  
 Նոյնքան գթառատ, բարի սիրտ ունի:  
 34 Որքան դաժան են զէմբերն Իր [բազում],  
 նոյնչափ զգացմունքներն կեանքով են լեցուն:  
 35 Առանց իր կամքի ոչ ոք չի մեղմի հարուածը նրա,  
 ու չեն յանդգնի խոչընդոտ լինել,

<sup>7</sup> Ադադ – ամպրոպի, փոթորկի եւ անձրեւի աստուածը, որի «հարուածներն» են ամպրոպ, կայծակ, ջրհեղեղ: Էոա – կործանարար պատերազմի եւ մահտարածամի աստուած:

36 երբ պատժի համար ձեռքն իր խոյանայ:  
 37 Ես, որ ձկան պէս հասայ յատակին,  
 պիտի վկայեմ զայրոյթն Իր վերին,  
 նաեւ որ անգամ վերջին վայրկեանին  
 Նա նոր կեանք շնորհեց անյոյս մեռնողին:  
 39 Յոյց կտամ մարդկանց,  
 որ անշափ մօտ է փրկութիւնն իրենց,  
 40 եւ այն Իր բարի մղումով է հէնց:  
 41 Այն օրը, երբ Տէրն ինձ պատիժ յղացաւ,  
 42 Մանուկն<sup>8</sup> վրաս [սաստիկ] զայրացաւ,  
 43 աստուածս ինձ իսկոյն մերժեց վերացաւ,  
 44 յետոյ դիցունիս լիեց, հեռացաւ:  
 45 Հովանաւորս՝ բարեգութ, քննուշ,  
 շտապով չֆացաւ, դարձաւ հեռու յուշ,  
 46 Պահապան ոգին, երկիւղելով [խիստ],  
 թողեց ինձ մենակ [ու թողեց անուժ]:  
 47 Եւ զօրութիւնս խլուեց նոյն պահին,  
 վնասութիւնը իշխեց կորովին:  
 48 Արգոյ վիճակս չֆացաւ շուտով  
 մի նոր հանգրուան գտնելու յոյսով:  
 49 Եւ սարսափազդու նշաններ եղան,  
 50 Տնից վռնդուած մի աստանդական՝  
 ստիպուած շրջեցի ես թափառական:  
 51 Իսկ նշանները խառն էին այնքան,  
 ամեն օր տարբեր ու հակասական,  
 52 որ ոչ մի գուշակ, ոչ երագահան  
 մեծ ջանքով հանդերձ չէին չիմացան՝  
 զաղտնիքն իմ ուղու բացողներ չեղան:  
 52 [Եւ ցերեկները շրջում էի լուռ],  
 Իմ վաղուայ մասին միշտ ստանում վատ լուր,  
 53 իսկ գիշերները՝ մահին մտնելիս  
 մղձաւանջով էր պարուրում հոգիս:

<sup>8</sup> Ձինուոր, մարտիկ. հմմտ. Վարդգէս Մանուկն:

54 Եւ պայծառ արեւն ժողովուրդների,  
 մարմնատրումը մեծ աստուածների  
 55 սիրան իր կարծրացրած՝ դէմքն ուղղեց վրաս  
 Եւ ողորմութիւնն ինձ դարձրեց անհաս:  
 57 Պալատական դասն ինձ չարախօսում,  
 58 Ժողովում պատիր մտքեր էր երկնում:  
 Ամեն բերանից, շուրթերից տարբեր  
 լսվում էին չար ու դաժան խօսքեր,  
 Յոխորտում էին, տալիս խոստումներ.  
 59 «Պիտի կործանեմ իր կեանքն ու ուղին»,–  
 60 «Ձեմ թողնի մնայ իր բարձր դիրքին»,–  
 61 «Պիտի տիրանամ ես իր պաշտօնին»,–  
 62 «Տիրանալու եմ տանը եւ ինչքին»:  
 63 [Միան առաւել թունոտ էր խօսում]<sup>9</sup>,  
 64 Յաջորդն՝ իրենից օրինակ վերցնում:  
 65 Եօթնեակը<sup>10</sup> դաշինք կնքեց անձիս դէմ,  
 66 անողոք դեւեր, սատանայի վէմ,  
 67 Թէպէտ մէկ մարմին դարձան միասին,  
 բայց բերաններով՝ տրոհ, առանձին,  
 68 Սրտերը բորբոք կրակով մաղձի՝  
 69 զրպարտութիւններ ուղղելով անձիս:  
 70 Պերնախօս ու սուր շուրթն իմ զսպեցին՝  
 ասես երասան վրաս ձգեցին,  
 71 Եւ խօսում հարտար լեզուս [լռեցրած],  
 անլուր ու անխօս, մունջ ինձ դարձրին:  
 72 Ձայնն իմ մարելով՝ դարձաւ լռութիւն,  
 73 [ձիգ մէջքս ծռուեց որպէս հին կեղեւ],  
 հպարտ գլուխս խոնարհուեց ներքեւ,

<sup>9</sup> Այստեղ առկայ է «հինգ» եւ «յիսուն» թուերի բառախաղ: Աքքադական մշակույթում 50-ը բարձրագոյն աստուածային իշխանութեան խորհրդանշական թիւն էր (սկզբնապէս՝ էնլիլի, ապա՝ Մարդուկի): Տողը կարող է ընդգծել, որ շար ուժն ի գօրու է խաթարել անգամ ամենաբարձրի կարգը. հմմտ. W. G. LAMBERT, *Babylonian Wisdom Literature*, Oxford, 1960, էջ 32–33:

<sup>10</sup> Նկատի ունի շարիք բերող եօթ ուժերի խումբը (Սեբիթու), որը միջագետքեան տարբեր բնագրերում ներկայանում է տարբեր կերպաւորումներով՝ իբրեւ եօթ եղբայր, եօթ քամիների միութիւն եւ այլ ձեւերով. օրինակ՝ հիւանդութիւն բերող քամի, պատիժ բերող քամի եւ

74 Եւ սիրտն իմ հզօր, [սիրտն իմ ամրակուտ]  
 տկարացաւ յոյժ՝ [դառնալով մի բուտ]:  
 75 [Եւ այսպէս հասայ այն աստիճանին]՝  
 կուրծքս յետ մղեց [մուտք] պատանին:  
 76 ձեռքերս առաջ հեռուն շօշափում  
 հիմա հագիւ եմ մէկմէկու հասնում:  
 77 Սովոր էի ես հպարտ ընթանալ,  
 այսօր ստիպուած եմ [լռելեայն] սողալ:  
 78 միտք իմ, դու սովոր ազատ թռիչիդ  
 դարձել ես հիմա [անկար] ստրկամիտ:  
 79 Իմ մեծ տոհմի մէջ՝ մենակ եմ մնում,  
 80 ինձ են ցոյց տալիս մարդիկ փողոցում:  
 81 Երբ պալատ մտնեմ՝  
 բոլորի աչքերն ինձ են սեւեռում:  
 82 Մոայլութեամբ էր փաղափն ինձ նայում՝  
 կարծես տեսնում է [արեան] թշնամուն:  
 83 Երկիրն այլեւս ինձ խորթ էր թում:  
 84 Եղբայրս դարձաւ օտար ինձ համար,  
 85 Ընկերս մի դեմ՝ [կործանիչ եւ] չար,  
 86 Դաժան մատնիչն էր եղել գործակից,  
 87 արեան զէն սրողն՝ ինձ ընկերակից:  
 88 Եւ կեանքս պղծեց մերձաւորն իմ հին,  
 89 ստրուկս ինձ անիծեց յարած ամբոխին,  
 90 ինձ բազմութեան մէջ զրպարտել սկսեց իմ հին ստրկունին,  
 91 Եւ ծանօթներս՝ առաջ ջերմագին  
 ինձ տեսնելուն պէս հեռանում էին:  
 92 Եւ միջավայրում նեղ, ընտանեկան  
 սկսեցի զգալ ինձ [խորթ], օտարական:  
 93 Ով ինձ բարով էր յիշել յանդգնում,  
 յայտնում էր նա խորին անդնդում,  
 94 իսկ ով սուտ, պատիւ խօսքեր տարածեր  
 այդպիսին արագ առաջ կմղուէր:

95 Եւ ով պատրաստ էր շարախօսութեան  
 աստուած էր լինում նրան օգնական,  
 96 Իսկ ինձ ողորմող, գրացող մարդկանց  
 արագ մահով էր լինում դատաստան:  
 97 Սատարողներս ի սպառ վերացան:  
 98 Ու ես մնացի հովանուց զրկուած,  
 իսկ կեանքս դարձաւ ասես կախարդուած:  
 99 Ինչքա իրար մէջ կիսեցին փոքով,  
 100 ջրանցքիս<sup>11</sup> ակը ծեփուեց աթարով,  
 101 եւ իմ արտերում [դադարեց հերկը],  
 լոեց մշակի առօրեայ երգը:  
 102 Լոռութիւն տիրեց իմ տարածքներում՝  
 [ասես դաշտերով խաղաղ ու բերրի]  
 ասպատակ վարգով անցաւ թշնամի:  
 103 Պաշտօնս շնորհուեց [ապիկար] մէկին,  
 104 ծիսական դիրքս տրուեց ուրիշին:  
 105 [Այլեւ] օրն իմ՝ հառաչանքով լի,  
 փոխում էր միայն գիշերուայ ողբի:  
 106 ամիսս մռայլ, յուսահատ տարի,  
 107 օրս էի ողբում՝ սգուոր աղանի:  
 108 Ողբասացի պէս բարձր հեծեծում  
 [վիշտս] պատմելով սգերգ եմ ասում:  
 109 աչքերս ցաւել սկսեցին լացից,  
 110 եւ այտս խարշուեց առատ արցունքից<sup>12</sup>:  
 111 Դէմքս մթագնեց տագնապը սրտիս,  
 112 սարսափից դեղնեց վառ գոյնը մաշկիս  
 113 եւ ներաշխարհս անվերջ տագնապում,  
 114 թրթռում էր ինչպէս բորբ հրի լեզուն:  
 115 Իսկ աղաչանքս էր խառնակ, երերուն,  
 116 խնդրանքս գուպար, վէճ եւ ընդվզում:  
 117 Ու թէ՛ն մեղրով շուրթերս օծեցի,  
 սակայն խստացան հանց սայր նիզակի:

<sup>11</sup> Բնագրում յոգնակի՝ ջրանցքներին:

<sup>12</sup> Բն.՝ Այտերս յիսուն անգամ այրուեցին արցունքից:

118 Կարելեաց չափով իմ խօսքը մեղմուեց,  
 եւ պատասխանս [կոկորդում] խեղդուեց:  
 119 Բայց գուցէ մի օր՝ պայծառ ու բարի,  
 բախտն իր ֆայլերը իմ կողմը ուղղի:  
 120 «Նոր լուսին կելնի կամարը երկնի,  
 կրկին իմ արեւն շողեր կարձակի»:

ԳԼՈՒԽ Բ.

1 Սահմանուած կարգով կեանքը կհոսի,  
 անցածի տեղը կգայ նոր տարի  
 2 Երբ շուրջս դարձայ, հայեացք նետեցի,  
 տեսայ ամեն բան յոյժ զարհուրելի՝  
 3 Ձախորդութիւնս վերելք էր ապրում,  
 յաջողութիւնս կորչում [անհունում]:  
 4 Ձայնեցի աստծոս, շայտնուեց նա,  
 5 Աղերս ուղղեցի իմ աստուածունհուն՝  
 արձագանք չկայ,  
 6 Գուշակը [հմուտ] անգօր գտնուեց հասնել խորքերին,  
 7 Խնկաբոյր ծխում երազահանը անկարող եղաւ մեկնել երազն իմ,  
 8 Անուրջի ոգուն դիմեցի, բայց նա ոչինչ չշայտնեց,  
 9 Ձայրոյթն [անսահման] իմ աստուածների,  
 այսահալածի<sup>13</sup> ծէտով չմեղմուեց:  
 10 Ինչ գործեր էին՝ օտար-անծանօթ՝ թէ՛ աջ, թէ՛ յահեակ,  
 11 Երբ յետ նայեցի, հալածանք տեսայ եւ ննջում մենակ:  
 12 Որպէս թէ մէկը երբեք իր կեանքում  
 ընծայ չէր բերել ըմպելիքն աստծուն,  
 13 Ու չէր մատուցել ուտեստի ընծայ  
 իր մեծ [ու չհնաղ, միակ] դիցունհուն:  
 14 Որ չէր սովորել երկիր պագանել,  
 իրեն խոնարհուած ոչ ոք չէր տեսել,  
 15 Որի բերանից աղօթք ու աղերս պակաս էր հնչել,  
 16 Չէր յիշատակել օրը սրբազան  
 եւ բաց էր թողել տօներն այլազան:

<sup>13</sup> Հոգեւոր դասի ներկայացուցիչ, որ աստիճանով ցածր է քրմերից:

17 Որ անփոյթ վարճով մոռացման մատնել՝  
 [ուխտի] ծէսերն էր անվերջ անտեսել:  
 18 Որ իր ձեռքի տակ աշխատողներին  
 նիշտ պաշտամունքը չէր ուսուցանել,  
 երկիւղ [ու հաւատ] նա չէր սերմանել:  
 19 Երբեք չէր ձայնել իր [պաշտպան] աստծուն՝  
 կեանքը նուիրած միայն ուտելուն:  
 20 Որ արհամարհած իր [մեծ] դիցուհուն,  
 ընծայի ալիւր նրան չէր տանում:  
 21 Ինչպէս մէկը, որ խելքը կորցըրած,  
 միակ տիրոջն իր իսպառ մոռացած,  
 22 տեղի-անտեղի երդում էր տուել  
 անունով աստծո՛ւ՝ միտքը մթագնուած:  
 Յիրաւի ես էլ այդպիսին եղայ:  
 23 Մինչդեռ ողջ կեանքում ուշադիր էի ծէսին-աղօթքին,  
 24 Աղաչանքն անվերջ ուղեկիցն էր իմ,  
 զոհաբերումը՝ կերպն իմ առունին:  
 25 Ծէսն աստուածների մեծարման տօնի,  
 ինձ համար անսպառ աղբիւր բերկրանքի,  
 26 ծէսը դիցուհու՝ բարիքն էր կեանքիս  
 եւ վարձատրումը [արդար ընթացքիս]:  
 27 Արեւշատ օրեր խնդրել արժային՝  
 աղօթող հոգուս բերկրանքն էր ինքնին,  
 28 եւ իր շումն անգամ բարեաց նախանիշ իմ [կարօտ] սրտին:  
 29 Եւ պատուիրանս էր իմ միջավայրին  
 սրբօրէն պահել ծէսն աստուածային:  
 30 Ուսուցանեցի իմ ազգին ազդու  
 յարգել անունը [մեր մեծ] դիցուհու:  
 31 Գովաբանեցի ես մեր արժային՝  
 դիտելով նրան էակ երկնային,  
 32 եւ սովորեցրի իմ ժողովրդին  
 երկիւղած նայել նրա պալատին:  
 33 Երանի [մի օր] ես իմանայի՝  
 սրանցից ո՞րն է աստծուն հանելի:

33 Եւ երանի թէ բացուէր իմ հոգուն՝  
 արդեօք հանոյ են բաներն այս աստծուն.  
 34 գուցէ ինչ որ մեզ բարի է սեպում,  
 խոտելի թուայ Նրան [վերետում],  
 35 եւ ինչ նողկալի կգայ մեր քիմքին,  
 կարող է բարի լինել իր աչքին:  
 36 Ո՛հ, ո՛վ կարող է ծանել իր կեանքում  
 մտածումը վէս վերին էութեան,  
 37 Խոհերը խորին երկնից դիցումնո՛ւ  
 անհաս ու անտես մտքին մարդկութեան:  
 38 Ո՛րտեղից մարդը պիտի սովորի  
 ուղիներն անձիր մեր աստուածների:  
 39 Մէկը, որ երէկ ողջ էր կէսօրին,  
 արդէն ոչ եւս է այսօրուայ ծէգին,  
 40 Մի պահ գերի է մարդը յուզմունքին,  
 իսկ մէկ վայրկեանից՝ զուարթ լիովին:  
 41 Աչք թարթելու հետ՝ երգում է ցնծում,  
 42 իսկ մէկ վայրկեանից՝ ոնց վարձու սգուոր լացում է, կոծում:  
 43 Այն, ինչ աստուածներն սահմանում են մեզ  
 փոխում է կտրուկ՝ աչք թարթելու պէս:  
 44 Երբ որ սոված են՝ խոնարհ են [մարդիկ], համեստ են ու հեզ  
 45 երբ յափրացած են աստծուն կկանչեն մրցման ասպարէզ:  
 46 Թէ ապրեն բարտք ժամանակներում  
 երկինք յառնելու մասին են խորհում,  
 47 իսկ թէ յոռի է ամեն բան, տրտում,  
 դժոխք իջնելուց են [անվերջ] բողոքում:  
 48 Իմ աչքով տեսայ ամենը կեանքում [...]

սակայն ոչ մի բան դեռ չեմ ընկալում:  
 49 Իսկ թէ ես պատմեմ ուղին իմ անցած՝  
 վարար յորձանուտ բշուեցի յանկարծ  
 50 տենդագին ախտի խոցումից հիւծուած  
 [մի օր գամուեցի ձախող շղթային]  
 51 իմ անձին ընդդէմ խիստ շար գոլորշին  
 սուրալով եկաւ երկրի ծագերից,

52 Եւ ցանն անողո՛ք, ցաւը կործանի՜չ  
 իմ դէմ խոյացաւ անդնդի խորհից:  
 53 Չարագոյն ուրն [մի օր] դուրս ելաւ իր խոր թափուստից,  
 54 անդույ մի ոգի յառնեց յաւերժի իր կացարանից,  
 55 Եւ մի դէտունի [իմ հոգուն ընդդէմ] իջաւ լեռներից:  
 56 Եւ դողեցոցք ինձ վրայ յորդեց  
 [լեռներից հոսող] վարար գետի պէս,  
 57 Տկարութիւնը բարգաւաւան ծաղկեց՝  
 ջրարբի վայրի սածիլների պէս,  
 58 ու միատրուած իրենց բազմութեամբ  
 ինձ էին ընտրել գրոհի ասպարէզ:  
 59 Եւ պաշարեցին գլուխս [շատ լուրջ],  
 բանակ դրեցին իմ գագաթի շուրջ,  
 60 Դէմքս մոայլուեց,  
 աչքերս դարձան հեղեղի աղբիւր:  
 Ծոճրակիս ջիւերն ճնշեցին ցաւով  
 61 պարանոցս այդպէս թուլացաւ [դաւով],  
 62 հարուածներ իջան իմ խոռխոտ կրծքին,  
 լանջս թակեցին,  
 63 մէջքս կոտրեցին,  
 ու ցնցումների մարմինս մատնած  
 64 ստամոքսիս խորքում կրակ վառեցին,  
 65 իսկ փորոտիքս խառնած շուտ տուին:  
 66 [Վնաս պատճառուեց նաեւ թոքերին]՝  
 հագով ու բորբով ախտահարեցին:  
 67 [Դժնի] վարակով խոցեցին [իսկոյն]  
 վերջոյթները իմ՝  
 հագիւ, երեւուն ընթացքս դարձրին:  
 68 Միատրուելով շուտ տապալեցին հասակն իմ [հսկայ]՝  
 որպէս մի խարխուլ պատ [հարիւրամեայ]:  
 69 Ամուր մարմինս հարթեցին նրանք [թաց] եղէգի պէս,  
 70 Եւ իբրեւ նահնի [անկար] մոլախոտ վայր նետուեցի ես,  
 71 Մի դէւ մարմինս հագաւ իբրեւ զգեստ:  
 72 Դաժան ցանցի պէս ինձ նիրհն էր խեղդում՝  
 73 Աչքերս [անթարթ առաջ] նայելով՝ բան չէին տեսնում,

- 74 Ձայնն ականջներիս [խորհին] էր հասնում, բայց չէին լսում:  
 75 Թմրուփին տիրեց ամբողջ իմ մարմնին,  
 76 Կաթնածը զարկեց իմ վերջոյթներին:  
 77 Եւ կարկամեցին բազուկները իմ,  
 78 Թուլութիւն իջաւ իմ [խեղն] ծնկներին,  
 79 Ուտերս դարձան անսովոր շարժին:  
 80 Յաղթուած կողոպտուած, հետում էի ես՝ որպէս տապալուած,  
 81 Եւ մահուան շունչն<sup>14</sup> էր դէմքիս [ղալկացած]:  
 82 Երբ ձայնում էին, անկարող խօսել՝  
 չէի տարբերում՝ ով է հարց ուղղել:  
 83 [...]նրանք ողբում են, լալիս աղեկեց,  
 գիտակցութիւնս կորցրել եմ ես:  
 84 Շուրթերիս [ամուր] որոգայթ դրուեց,  
 85 [Ծանր] փականով բերանս կողպուեց:  
 86 Կոկորդիս ասես դրուել էր խցան,  
 չէի կարող ես ջուր իմել անգամ:  
 87 Քաղցս յաւերժ էր, կոկորդս՝ սեղմուած,  
 եւ նոյնիսկ եթէ ձեռքս ընկնէր հաց  
 հագիւ կու տայի հանց փուշ չորացած:  
 88 Իսկ գարեջուրը՝ մարդկանց ցանկալի,  
 քիմքիս դարձել էր [տհան], նողկալի:  
 90 Իրանդութիւնն էր անվերջանալի,  
 91 յարատեւ ֆաղցից դէմքս դարձրել էր աննանաչելի,  
 92 Մարմինս՝ մաշուել, արիւնս՝ ֆամուել:  
 93 [Բոլոր ողերս] դուրս էին ցցուած՝ միայն մաշկով էր ոսկորս ծածկուած:  
 94 Եւ երակներս դուրս էին եկել,  
 [դաժան] դեղնախտը [սկսեց] ֆայֆայել:  
 95 Իսկ մահիճը իմ դարձել էր կապանք,  
 սեմից ելնելը՝ ծանր տառապանք,  
 96 հարազատ տունս ե՛ւ բանտ, ե՛ւ կալանք:  
 97 Եւ ուժը բազկիս այլեւս չկայ,  
 մարմինս դարձաւ ինձ համար շղթայ:

<sup>14</sup> Բն.՝ լորձը:

98 Ոտքերս արդէն չէին ծառայում,  
 անձս ինձ համար կապանք էր դառնում:  
 99 Տառապանքս՝ մեծ ու սաստիկ հարուած,  
 100 Եւ խարազանը գամերով ծածկուած,  
 իջնում էր [հատու, արագ], շեշտակի,  
 101 ու հարուածները փշոտ մտրակի  
 ենթարկում էին յաւերժ կտտանքի:  
 102 Եւ ցերեկը ողջ անդադար տանջանք,  
 գիշերը անդու, անվերջ տառապանք  
 103 [Եւ մինչեւ օրուայ մոայլ լուսադէմ]  
 չէր ստացում անգամ, որ մի շունչ փաշեմ:  
 104 Եւ ցնցումներից յօդերս պոկուել,  
 իրենց տեղերից դուրս էին եկել,  
 105 Անտեր-անկանոն աջ ու ձախ ընկել:  
 106 Եւ որպէս անբան բնակիչ գոմի  
 ինքս իմ աղբում գիշերն անցկացրի,  
 107 Եւ թաւալուեցի ես իմ ջրերում  
 որպէս մակաղած ոչխարն է անում<sup>15</sup>:  
 108 Երբ ախտանիշներն տեսաւ իմ բոլոր  
 այսահալածը ետ փաշուեց մոլոր:  
 109 Եւ նշանները իմ շփոթեցրին  
 [իր գործում թրծուած հմուտ] գուշակին:  
 110 Այսահալածը չէր կարող մեկնել,  
 թէ [թշուառ] անձիս ի՞նչ է պատահել,  
 111 գուշակն անգօր էր ժամկէտ սահմանել:  
 112 Իսկ աստուածս ինձ փրկել շտապեց,  
 մօտս նա չեկաւ, ձեռքս չբռնեց,  
 113 Եւ ինձ չգթաց իմ աստուածունիս  
 երբեք շտեսայ նրան իմ կողմին:  
 114 Իմ գերեզմանը պատրաստուեց [փոյթով],  
 թաղման իրերը շարեցին կարգով,  
 115 Եւ ինձ սգացին՝ մինչ մահը կգար,

<sup>15</sup> Մեղմեցիինք ըստ կարելեաց մերոց. բնագրում կենսագործունէութիւնն անմիջականօրէն է նկարագրուած:

116 երկիրս ասում էր. «Ի՛նչ խեղճ է, թշուառ»:  
 117 Սա իմանալով իմ շարականը յոյժ պայծառացաւ,  
 119 մինչդեռ ակուրթիս օրը խաւարեց, լոյսը սեւացաւ,  
 120 մտերիմներիս, նանաշողներիս  
 արեւը սփողուեց եւ անհետացաւ:

ԳԼՈՒԽ Գ.

ԾԱՆՐ ԶԵՌՔԸ ԻՐ ՎՐԱՍ ԷՐ ԻՋԵԼ...

1 Ծանր ձեռքը Իր վրաս էր իջել,  
 եւ անկարող էի այդ բեռը կրել:  
 2 Նրա ահը ծայրայեղ էր, այն [ինձ լցնում էր ...]:  
 3 Նրա [պատիժը] կատաղի էր, հեղեղը [...],  
 4 Նրա կեցուածքն անփոփոխ էր, [...]:  
 5 Սաստիկ հիւանդութիւն՝ առանց [...] իմ անձը,  
 6 Ես կորցրի զգօնութիւնը, [...] թողեցին միտքս թափառի:  
 7 Եւ ի տըւէ ի գիշերի՝ հեծեծանքս էր [մոլոր-շուար],  
 8 Թէ՛ երագում, թէ՛ արթմնի նոյն վիճակս էր՝ խեղճ և թշուառ:  
 9 Բայց ինձ երեւաց մի թիկնոցաւոր  
 10 մարմնով գերագանց եւ արտասովոր:  
 11 Եւ որովհետեւ անուրջում տեսայ  
 երիտասարդն ինձ երեւաց հսկայ:  
 12 Շփեղութեամբ էր նա ամբողջ զուգուած,  
 խորհրդաւոր էր՝ սարսափով պատուած:  
 13 Նա մօտեցաւ ինձ, վերեւս կանգնեց:  
 14 [Երբ տեսայ նրան], մարմինս թմրեց:  
 15 Եւ յայտնեց [ինձ] նա.  
 «Քո տէրն է ինձ [շտապ] ուղարկել [հիմա],  
 16 «[ասելու ...]  
 այդ ամենաթշուառ մարդուն՝  
 որ պէտք է սպասի ապափննուելուն»:  
 17 Երբ ես լիովին վեր էի կացել,  
 շարունակ նոյն հարցն էր իմ միտքը յուզել.  
 18 «Ո՞վ էր այն մարդը, կարո՞ղ էք ասել,  
 որին Արքան էր [այստեղ] ուղարկել»:  
 19 Պատասխան չկար, շուրջս լռեցին,

- 20 Եւ նոյնիսկ ոմանք փախան, գնացին:  
 21 Եւ երկրորդ անգամ ինձ երագ եղաւ:  
 22 Եւ [ուշ գիշերուայ] իմ այդ երագում,  
 23 առջեւս յառնեց արտառոց մի բուրմ՝  
 հետը սրբագործ ջուր էր նա բերում,  
 24 Եւ մաքրագործող կարմրանի<sup>16</sup> մի շիւղ  
 իր ձեռքին բռնած՝  
 նա յանկարծ ասաց.  
 25 «Ինձ ուղարկել է բոլորին յայտնի,  
 այսահալածը<sup>17</sup> Նիպպուր քաղաքի,  
 26 ասել է գնա՛ եւ նրան մաքրի՛ր»:  
 27 Իր բերած ջուրը նա վրաս ցօղեց,  
 28 Եւ կենդանացնող հմայանք գործեց,  
 մարմինն իմ շփեց:  
 29 Ու երրորդ անգամ ես երագ տեսայ:  
 30 Եւ [մութ] գիշերուայ իմ այդ երագին,  
 31 Տեսայ մանկամարդ, գեղադէմ մի կին:  
 32 Չնայած շատ մեծ հեռաւորութեան  
 նմանեցրի ես մի աստուածութեան:  
 33 Եւ մարդկանց խմբում ինքն էր թագունիին,  
 իսկ երկրի վրայ երեւելի կին:  
 34 Եւ տեսայ նրան իմ կողմը գալիս,  
 իսկ նա մօտեցաւ ու նստեց կողքիս, [...]:  
 35 Նա ասաց. «Ողորմեցէ՛ք սրան, շատ է տառապել»:  
 36 «[Ո՛հ] մի՛ վախեցիր»,- շրջուեց կողմը իմ,-  
 «Մարդուկը [սահման] դրեց քո ցալին»:-  
 37 «Քանզի երագում թշուառն այդ տեսաւ[...]»:  
 38 Նրանք ասացին. «Ողորմութիւն նրան, նա շատ է տառապել»:  
 39 «Ո՞վ է երագում տեսել նման բան»:  
 40 Մեզ կեանքեր շնորհող դիցուհու<sup>18</sup> ծառան  
 [անձամբ] էր եկել ինձ այցելութեան

<sup>16</sup> Բն.՝ tamarisk կամ tamarix:

<sup>17</sup> Բն. անունն է՝ Լալուրալիմմա – Պատուաւորի կամ վեհագոյնի առատութիւնը վայելող կամ «վեհագոյնի օրհնած անձ»:

<sup>18</sup> Բնագրում անունն է՝ Ուր-Նինտինուգգա. իմա՛ «կեանք շնորհող տիրուհի»:

- 41 երիտասարդը՝ մօրուհով սիրուն,  
խոյրով զարդարուն,  
42 այսահալած ֆուրմ.  
որ ձեռքին կալէ սալիկ<sup>19</sup> էր բռնում.  
43 «Ինձ [մեծ] Մարդուկն է [այստեղ] ուղարկել»:  
44 «Ձեզ [արդար] հունձֆի մի խուրձ եմ բերել»:  
45 Հունձֆի այդ խուրձը իր մահուր ձեռքին,  
46 Մօտեցաւ, յանձնեց ինձ խնամողներին:  
47 Երբ արթուն էի ես, յղեց մի պատգամ,  
48 իմ մարդկանց յայտնեց մի բարի նշան:  
49 Ու չնայած ես երկար եմ [...] ջերմել,  
50 փութով իմ ցաւը սկսեց [...] նահանջել:  
51 Այն բանից յետոյ, երբ որ իմ Տիրոջ՝  
Մարդուկի սիրտը մի պահ խաղաղ[ուեց],  
52 եւ վրդովմունքն իր գնալով մեղմուեց  
53 Նա, ընդունելով իմ աղերսները[ ... ...] վերցրեց:  
54 Եւ Իր ներումը ինձ ի ցոյց դրուեց:  
55 [Նրանք աս]ացին. «Ողորմութիւն նրան, նա շատ է տառապել»:  
56 Նրա աստուածութիւնը փառաբանելու [...]:  
57 Նրա մեծութիւնը գովերգելու [...]:  
58 Նա անտեսեց իմ մեղքը, իմ յանցանքը [...]:  
59 Նա հեռացրեց իմ պատիժը, իմ մեղքը [...]:  
60 Իմ ազատման համար ... [...]:  
61 Նա յանձնեց ֆամուն, որ նա ցրի իմ մեղքերը:  
62 Ինձ վրայ եղած անէծքը, նզովքը [...]:  
63 [...]:  
64 [...]:  
65 [...]:  
66 [...]:  
67 [...]:

<sup>19</sup> Այս դէպքում ոչ թէ պարզապէս գրանիւթ է, այլ քրմական գործիք է, որի վրայ դրոշմուած են Մարդուկին վերառաքուող հմայական, մաքրագործող եւ բուժական բանաձեւերը:

- 68 [Մարդուկն] ինձ բերեց առողջ ու բարօր  
 [օրեր ապրելու հրաշքն] անմեկին  
 եւ ՝ մինչեւ երկրի ծագերը վանեց
- 69 [յոյժ] չար գոլորշին  
 70 եւ [ցար] սուզեց վիհը ծործորի,  
 71 Չար ուրուականը՝ խորքն անդունդների,  
 72 Անհանգիստ հոգին նա դարձեալ վանեց կացարանը իր,  
 73 Նաեւ էգ-դեփն Նա տապալեց-ֆշեց դէպ լեռները իր,  
 74 դողախտին ստիպեց, որ դիմակայի ալիքին ծովում,  
 75 տկարութիւնը արմատով իլեց  
 որպէս թոյլ բոյսն են [մայր] հողից պոկում,  
 76 Անհանգիստ բունը, ֆնկոտութիւնը,  
 77 Նա ցրեց՝ որպէս ծովսը երկնում:  
 78 [Բանաձեւերը չար կախարդանքի,  
 սիրուած գործիքը խաւար դեւերի]՝  
 «Հեռանա՛», «Կորչի՛», «Գետնամո՛ւտ լինի»:
- 79 Նա ցրեց՝ որպէս մշուշը, [...] երկրի:  
 80 Գլխում մոլեգնող հիւանդութիւնը,  
 որ ծանր էր որպէս ֆար ջրաղացի,  
 81 Նա վանեց իբրեւ ցօղ այգաբացի:  
 82 Մութը, որ վաղուց աշերիս իջել  
 եւ ինձ պատել էր մահուան [սեւ] ֆողով,  
 83 ստիպուած էր դէպի հեռուն նահանջել,  
 տեսողութիւնս վերադարձնելով:  
 84 Ականջներս էին լրիս խցանուած,  
 չէին փոխանցում ինձ ոչ մի հնչիւն,  
 85 Նա վերադարձրեց շնորհս կորսուած,  
 կրկին ինձ տալով սուր լսողութիւն:  
 86 Իսկ ֆիթս իւեղդուած տենդի պատճառով  
 87 նորից գօրացաւ՝ հանգիստ շնչելով:  
 88 Շուրթերս՝ շերմից հազիւ մոմնջող  
 չորացել, նաֆել, կեղեակակալել՝  
 89 Նա [իսկոյն] սրբեց վերերը բոլոր՝  
 ստիպելով կրկին վառ գոյնով լցուել:

- 90 Եւ բերանը իմ՝ վերբերով ծածկուած,  
 որ անգամ իսօսքը հազիւ էր ելնում,  
 91 Նա մաքրեց որպէս մետաղի հատուած՝  
 դարձնելով կրկին առողջ եւ [փայլուն]:  
 92 Ատամները իմ, ծնոստ սեղմուած  
 կարծես լինէին միասին կողպուած:  
 93 Նա իսկոյն բացեց կապանքը դրանց:  
 94 Նաեւ իմ լեզուն, որ [անյոյս] կապուել,  
 եւ կարծես երբեք չէր լինի շարժուն,  
 95 [Նա] մաքուր սրբեց փառք վրայի,  
 իսօսքս դարձնելով յստակ եւ սահուն:  
 96 Կոկորդս սեղմուած՝  
 պատրաստ իսեղդուելու,  
 անկարող անգամ ջուրը կոպ տալու,  
 97 Նա մաքրեց-կոկեց,  
 եւ ձայնս բացեց  
 երգերիս տալով ուժը հնչելու՝  
 որպէս սրինգի կանչը խիստ ազդու:  
 98 [Կերակրափողն] այնպէս էր ուռել  
 որ անկարող էր [սնունդ] ընդունել:  
 99 Ուտածութիւնը իջաւ [ու անցաւ],  
 եւ խցանումը իսպառ վերացաւ:  
 100 [Թո՛ղերս]՝ հազից թուպացած [...],  
 101 Կուտակուած [լորձը] Նա հանեց [...]:  
 102 [Եւ գործարանս] տղամարդկութեան՝  
 երբեմնի ըմբոստ,  
 վստահութիւնը լրիւ կորցնելով,  
 դարձել էր դալար մի արմալի ոստ:  
 103 [Նա ... դրա ... ], ... [...]:  
 104 Աղիները իմ, որ երկար [օրեր] դատարկ մնալով՝  
 ոլորուել էին եւ հիստուել իրար որպէս մի կողով,  
 105 [Նա ...] ուտածութիւնը [...]:  
 106 Արդէն կարող էր սնունդն ընդունել  
 հիւթ եւ ըմպելիք իր ներսում] կուտել:  
 107 [Եւ ունեցուածքս], որը իրար մէջ կիսեցին փութով,

կրկին ետ եկաւ մերձատրոներիս [յամառ] շանֆերով:

108 [...] ... [...]:

109 [...] ... [...]:

110 [...] ... [...]:

ԳԼՈՒԽ Ե.

ՄԽԻԹԱՐՈՒԹԻՒՆ ՏԷՐՆ ԻՄ ԻՆՁ ՇՆՈՐՀԵՑ:

1 Մխիթարոպիսն Տէրն իմ ինձ շնորհեց:

2 Եւ վերհերին իմ [սպեղանի] դրեց:

3 Տէրս ինձ ազատեց,

4 ինձ կենդանացրեց,

5 Նա ինձ դուրս բերեց անյատակ ձորից,

6 Նա ինձ ամրացրեց,

7 Նա ինձ յետ կանչեց [կործանման ծիր]ից,

8 Նա ինձ յետ ֆաշեց [չար] մահուան գետից<sup>20</sup>:

9 Դժբախտութեան մէջ բռնեց իմ ձեռքից,

10 [Արթնութեան համար] աջով ապտակեց,

11 Զախով գլուխս [կախուած] բարձրացրեց:

12 Մարդուկը խփեց վրաս եկողին՝

13 ստիպելով զէնֆը վայր գցի գետնին:

14 Նա ինձ կոպ տալու պատրաստ առիծի երախը փակեց

15 ու պարսատիկը հետապնդողիս Մարդուկը խլեց,

նաեւ ընթացքը [կռշտ] պարսաֆարի Նա [արագ] շեղեց:

18 Մարդուկը խլեց բահը նրանից,

որ գերեզման էր ինձ համար փորում:

19 Կայծֆար դաշոյնը վերցրեց նրանից,

որ ինձ սգալու ծէսն էր կատարում<sup>21</sup>:

<sup>20</sup> Սա անմիջականօրէն ողջերի եւ հանգուցեալների սահմանն է, որ բնորոշում է շումերերէն Հուբուր ձեւով (գետ, անդրաշխարհ):

<sup>21</sup> Սգալիս կայծքարէ դանակով ինքնախոցումը ծիսական սովորոյթ էր, արտայայտում էր վշտի խորութիւնը եւ խորհրդանշում էր մահացողի հետ միասին հեռանալու յօժարութիւնը. հմմտ. Արտաշէս-Արտաւազդ դրուագը (ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՅԻ, Պատմութիւն, գ. Բ., գլ. կա.). «Զամանէ երգիչքն Գողթան առասպելաբանեն այսպէս. եթէ ի մահուանն Արտաշիսի բազում կոտորածք լինէին ըստ արիւնի հեթանոսաց. դժուարի, ասեն, Արտաւազդ ասելով ցհայրն. «Մինչ դու գնացեր, եւ գերկիրս ամենայն ընդ քեզ տարար, ես աւերակացս ո՞ւմ թագաւորեմ»:

- 20 Եւ դադարեցրեց լացը այն կնոջ,  
 որ իմ վաղաժամ կորուստն էր ողբում:  
 21 «Աւաղ»-ներ կիսեց մարդու բերանում,  
 որ վատ վիճակս էր ցնծալով տօնում:  
 22 Նա [...] այն կնոջ բերանը,  
 որ չար վիճակիս համար էր ցնծում:  
 23 Նա նեւեց [...]:  
 24 Նա պայծառ դարձրեց [...]:  
 25 Փողոցը [...]:  
 26 Ինձ առաջնորդեց [...] մեծ հրապարակով,  
 27 Ինձ առաջնորդեց [...] տանարի դռնով:  
 28 [...] Մարդուկը մեծացրեց,  
 29 [...] Տիրունի՛ն<sup>22</sup> մեծացրեց:  
 30 Եթէ տէրը ինձ ազատ չարձակէր,  
 31 Կեանքը իմ շուտով կմարէր անշուշտ:  
 32 Կնետուէի ես մահուան գիրկն անշուշտ:  
 33 Որպէս ուրուական կհեռանայի անշուշտ:  
 34 Եթէ չպահէր ինձ տէրը [ամուր],  
 35 Կդառնայի ես դեփ կերակուր,  
 առիծի համար՝ պատառ ուտելով՝  
 36 Կվերանայի որպէս մսացու:  
 37 37 Եւ մաքրեցի ինձ՝ մազերս ուղղելով,  
 38 Նորոգման պայծառ լուացումներով:  
 39 Մայրը, որ լսեց [...] [...],  
 40 [հոնարհում], աղերս [...]  
 առ տանարն մեծ, գլխաւոր ու վէս<sup>23</sup>:  
 41 Ես, որ գալիս եմ [սառն] գերեզմանից՝  
 շարժուելով [դժուար ու ցուրտ տեղերով],  
 անցայ [փրկարար] «[Արեւածագի]  
 [բարձր] դարպասով»:  
 42 «[Բարօրութեան] դարպասում] բարօրութիւնը հասաւ ինձ,  
 43 «[Պահապան ոգու] դարպասում] պահապան ոգի մօտեցաւ [ինձ]:

<sup>22</sup> Բն. անունն է՝ Զարպանիթու՝ Մարդուկի կինը, գթութեան, պտղաբերութեան դիցուհին:

<sup>23</sup> Բնագրում՝ էսագիլն «վեհագոյն (գլխի) տուն»՝ Մարդուկի գլխաւոր տանարը Բաբելոնում:

- 44 «Բարեկեցութեան» դարպասում] բարեկեցութիւն շնորհուեց ինձ,  
 45 «Կեանքի» դարպասում կեանք շնորհուեց ինձ,  
 46 «Արեւածագի» դարպասում ես դասուեցի ողջերի շարքը,  
 47 «Փառաւոր Զարմանքի» դարպասում իմ նշանները յստակ տեսանելի էին,  
 48 «Մեղքից Ազատման» դարպասում ես ազատուեցի իմ կապանքից,  
 49 «Սրբեալ Զրի» դարպասում ինձ ցօղեցին մաքրագործ ջրով,  
 50 «Խորհրդածութեան» Դարպասում շուրթս հարց ուղղեց,  
 51 «Հեծեծանքի Թերեացման» դարպասում իմ ողբը մեղմուեց,  
 52 «Հաշտեցման» Դարպաս ես ներկայացայ Մարդուկի հետ,  
 53 «Ուրախութեան» դարպասում՝  
 համբուրեցի ոտքը Տիրուհու<sup>24</sup>:  
 54 Եւ նրանց առջեւ խոնարհմամբ, խնկով  
 55 աղօթքով [անվերջ] եւ աղերսեցի,  
 56 զոհեր եւ ընծայ,  
 տարբեր նուէրներ եւ մատուցեցի:  
 57 Եւ բազում պարարտ եզներ զենեցի,  
 ընտիր, գիրացեալ ոշխարներ նաեւ,  
 58 ու ջուրն գարոյ՝ անուշ, մեղրահամ  
 անարատ գինի՝ յոյժ անուշահամ:  
 59 Պահապաններին, պաշտպանիչ ուժին,  
 սպասաւորներին [տուրք], աստուածային  
 [խմբեցի մէկտեղ] տանարի<sup>25</sup> մօտ եւ  
 [կազմեցի մի մեծ, գեղեցիկ հանդէս].  
 60 Հեղուկ ընծաներն սրտեր ջերմացրին,  
 61 իսկ առատ զոհերն ուրախացրին  
 [ մեր աստուածներին]:  
 62 [Տանարի շեմին] նաեւ դռներին  
 63 [Նուիրեցի] իւղ, սերուցք կարագի,  
 տեսակներ ընտիր հացահատիկի:  
 64 [...]:  
 65 [...] հացահատիկ, ոսկէ [...]:  
 66 Անուշահոտ նոցու բուրմունք նրանց վրայ [...]:

<sup>24</sup> Տէս ծան. 18:

<sup>25</sup> Անգլերէնում տաճարի անունն է՝ Էսագիլեան:

- 67 [Խնջոյք]ները բարելացիների [...]:  
 68 Իր (Մարդուկի) հրամանով սրահ պատրաստուեց ի սէր մեր ազգի,  
 որպէսզի մարդիկ այնտեղ հաւաքուեն [մեծ խնջոյքների]:  
 69 Եւ բարելացիք տեսան անսահման ուժը Մարդուկի՝  
 ինչպէս կարող է կեանք վերադարձնել անգամ մեռածի:  
 70 Բոլոր շուրթերից բարձր արարուեց հոշակը փառքի,  
 [ինչպէսեւ խօսքը] մարդկանց զարմանքի.  
 71 «Ո՞վ կասէր, թէ նա արեւ կտեսնի»:  
 72 «Ո՞վ կպատկերացնէր՝ փողոցով կանցնի»:  
 73 «Բացի Մարդուկից, ո՞վ է ի գօրու  
 մահուան հասածին կենդանացնելու»:  
 74 «Մեր տիրոջ վսեմ տիկնոջից<sup>26</sup> բացի  
 ո՞վ է ընդունակ շնորհել շունչ կեանքի»:  
 75 «Կարող է Մարդուկն կեանք բերել շիրմից,  
 76 իսկ մեծ տիկինը՝ փրկել ջնջումից»:  
 77 «Որտեղ երկիրը հաստատ է, [կայուն],  
 այնտեղ երկինքն է [թեւերը] բացում,  
 78 «Որտեղ արեւն է վերել բարձրանում,  
 ասես կրակ է այնտեղ բորբոխում,  
 79 «Որտեղ որ ջուրը հոսում է [այգին],  
 այնտեղ [առաւօտ] փշում է փամփն:  
 80 «Ում կալից հունցեց ստեղծող դիցունին<sup>27</sup>,  
 81 «Ուվեր շունչ առած երկրով շարժուեցին,  
 82 «Որքան շատանան, լինեն ատելին,  
 թո՛ղ բարձրարարեն [մեծն] Մարդուկին:  
 83 «[...] նրանք, ուվեր կարող են խօսել,  
 84 «[...] թո՛ղ նա իշխի բոլոր ժողովուրդներին,  
 85 «[...] թո՛ղ նա] հովուի բոլոր բնակավայրերը,  
 86 «[...], խորհերից եկող բարձր ջրերը,  
 87 «[...], թո՛ղ նա բերի] աստուածների սրբութիւնները,  
 88 «[...], երկնքի եւ երկրի տարածութիւնը,  
 89 «[...], նա (Մարդուկն) շտապեց փրկել ընկածին,

<sup>26</sup> Տէս ծան. 16:

<sup>27</sup> Բն. անունն է՝ Արուրու-Մայր-արարիչ դիցունի:

- 90 «[...] թող մարդիկ [խկոյն] տանեն ընկածին»<sup>28</sup>;
- 91 [...]:
- 92 [...] լուսատուրութիւն [...]:
- 93 [լեռներ եւ] ծովեր [...]:
- 94 [Ժողովուրդը ...] իրենց ընծայաբեր ամանները:
- 95 [...] նրա թագաւորութեան օրերը [...]:
- 96 [...] կենսունակութիւն, [...] երկար] կեանք,
- 97 [... ամուր՝ բոլոր ժամանակների համար, թո՛ղ նրա (Բաբելոնի) արմատները տարածուեն,
- 98 [...] Մեծ Տանարի ստուերի ներքոյ] [...] թող ճիւղերն աճեն:
- 99 [...] հօգօր թագաւոր»<sup>29</sup> [...] երկար] կեանք,
- 100 [...] տոկունութիւն [...]:
- 101 [...]:
- 102 [...] տէրը, նրա քաղաքը վերադարձաւ,
- 103 [...] ժողովուրդը, թող նա<sup>30</sup> իշխի Միջագետքի բնակիչներին:
- 104 [...] Դիցունու], Մարդուկի ողորմութիւնը,
- 105 [...] Տանարը եւ Բաբելոնը], [...] հպարտ,
- 106 [...], թող նրա անունը հնչի բարի բախտի համար,
- 107 [...], թող նա լիովին վայելի կեանքի ուրախութիւնները,
- 108 [...] թող նա ստանայ երկնքի [...] -ը,
- 109 [...] թող նա հասնի] այն ամենին,
- 110 [...] ինչ ցանկանում է հպատակներին:
- 111 [...] Շուրջի-մեջրէ-Շաֆան<sup>31</sup>,
- 112 [...] Շուների եւ Աֆադի, երկրի տիրակալը:
- 113 [Նա, որ տառապանք է տեսել, թող] նրա պատիժը [ներուի],
- 114 [...], թող նրա ներդրութիւնը թերեւացուի,

<sup>28</sup> Իմա՛ [թագման ծէսի մասնակիցները տանեն նրան]:

<sup>29</sup> Բնագրում անունն է՝ Նագիմարութթաշ – Ք. ա. ԺԳ. դարի Բաբելոնական թագաւոր, որին առնչակցում են բժշկութեան եւ արեւի աստուածութիւնների հետ:

<sup>30</sup> Ըստ արհեստական բանականութեան՝ բայական ձեւից դատելով որոշում է, որ դերանունը ոչ թէ Մարդուկին է խորհրդանշում, այլ թագաւորին:

<sup>31</sup> Տեսակէտ կայ, թէ սա հէնց հերոսի անունն է: Դա հերքում է այնու, որ քերթուածը պատկանում է իմաստասիրական-ծիսական սեռին, ուստի հերոսի անուն չտայն սկզբունքային է. նրա փոխարէն պիտի գիտակցուի իւրաքանչիւրը: Միւս կողման այն է, որ անունը հանդիպում է յիշատակագրութեան հաստուածում եւ ըստ տարածուած կերպի պիտի լինէր առաջին դէմքով: Եւ վերջապէս, եթէ հերոսն անուն ունի (օր.՝ Գիլգամէշ), այն ներկայացւում է կամ սկզբում կամ նիւթն ու հերոսներին ներկայացնելու հատուածում:

- 115 [Թող նրա աստուածը ... նրան], թող նրա աստուածունին պատուի նրան,  
 116 [...] Ժողովուրդը [...] բարօրութեան մէջ,  
 117 [...], թող նրա արքան պատուի նրան,  
 118 [Լաւ առողջութիւն] եւ սրտի ուրախութիւն թող նա փնտրի ամեն օր:  
 119 [Ժողովուրդը ...] Շուրջի-մեշրե-Շաֆֆանի երգով՝ իրենք գովաբանեցին [Նրան],  
 120 [Տէր Մարդուկ խնդրում ենք]  
 գովաբանելը փաղցր է:

### ՀԻՄՆԱԲԱՌԵՐ

Բարեյակական «Յոբ», *Ludlul bēl nēmeqi*, Միջագետքի իմաստութեան գրականութիւն, արդար տառապեալ, Աստուածարդարացում, Մարդուկ, Արևելահայերէն թարգմանութիւն, Յոբի գիրք,

### РЕЗЮМЕ

Впервые на современном восточноармянском языке предлагается поэтический перевод вавилонской поэмы «*Ludlul bēl nēmeqi*», широко известной под названием «Вавилонский Иов». Помимо художественного переложения оригинала, статья исследует религиозно-идеологическое содержание произведения и сопровождает текст подробным комментарием, призванным прояснить наиболее сложные и тёмные его фрагменты.

### SUMMARY

For the first time, Armenian readers are offered a modern Eastern Armenian poetic translation of the Babylonian poem *Ludlul bēl nēmeqi*, widely known as the *Babylonian 'Job'*. In addition to an accurate artistic adaptation of the original, this article explores the religious and ideological aspects of the work and provides detailed annotations to clarify the most complex and obscure passages of the text.